

ՄԻ ՔԵՆԻ ՕՐ

ԱՐՑԱԽՈՒՄ ԵՒ ՍԻՒՆԻՔՈՒՄ *)

Այդպիսի «ծակերով» կամ քարանձաւներով է ծած-
կուած Կորիս գետի ամբողջ ձորը. Երևի այդտեղից է
«Չագեճոր» հին անունը, որ թրքական աղաւաղ արտա-
սանութեամբ (ծ, ծ հնչիւններ նրանք չունեն), դառել է
Զանգեզուր։

Այժմեան Զանգեզուր գաւառի մէջ մտնում են հին
Սիւնեաց աշխարհի տասներկու գաւառների մասը-
Դրանցից մէկով մենք արդէն անցանք. Արցախին սահ-
մանակից այդ Աղահէճք կոչուած գաւառը բռնում էր,
հաւանականօրէն, Հարբարի գետի վերին աւազանը. Այդ-
գետի օժանդակ Զարդից յետոյ մենք մտանք Հարանդ-
գաւառը, որի կենտրոնում է Կորիսը։

Ամբողջ օրը Երկինքը ամպամած էր, եղանակը զով-
երք հասանք քաղաք սկսեց անձրև մաղել. Դիմացի լեռ-
ները ծածկուած էին մշուշի թանձր քողով։

Կառապանս յայտնեց որ այդ փոքրիկ նոր քաղա-
քում գոյութիւն ունեն երկու հիւրանոց. «Կոնկուրեն-
ցիա» և «Պրոդրեսս»։

— Ո՞րն է լաւը։

— «Կոնկուրենցիան», աղա։

Գաղափար չունենալով կորիսեցիների պրոդրեսսի
մասին, աւելի մատչելի համարեցի նրանց մերկանտիլ

*) 888 «Մուրճ», № 10.

հասկացողութեան՝ կոնկուրենցիան... Եւ իսկապէս ինչ առաջադիմութիւն կարող էր լինել մօտ Յ հազար աղդամնակութիւն ունեցող մի զուտ հայկական քաղաքում, ուր ոչ մի օրինակ հայ ամսագիր չի ստացւում։ «Զարմանալի չափ» կ'ասի ընթերցողը, որ լսել է թէ՝ գործածած սապոնի բանակութեամբ են որոշում «քաղաքակալիթութիւնըն ու պրոդրեսուր»...—Հոդ չէ. ով որոշ շորլոնների սիրահար է, թող այդպէս էլ շարունակի մտածել. ինձ թւում է որ իմ մաշտարը որոշ մորալ տեսակէտներով աւելի պակաս ճշտութիւն չունի, քան ձեր սապօնն ու անուշահոտ ջրերը... Ասենք «կոնկուրենցիայում» ինձ սպասում էր ոչ անուշ բուրմունք, այլ գարշահոտութիւն, չգիտեմ ինչ կը գտնէի՝ «Պրօդրեսսում»...

Իմ իջևանած հիւրանոցը զետեղուած էր քարուկրից շինած մի երկյարկանի կոկիկ տնում, որի նման էին այդ նոր քաղաքի ուղիղ և լայն փողոցների համարեա բոլոր շինութիւնները, բոլորն էլ Ղարաբաղի մայրաքաղաք Շուշու ճարտարապետական ոճի հետևողութեամբ։

Զարմանալի էլ չէ որ Շուշին, կամ ինչպէս ժողովուրդն է ասում «Ղալան», այդպէս մեծ աղդեցութիւն ունի Կորիսի վրայ. Ղարաբաղի մայրաքաղաքը միակ քաղաքակալիթուածն է, որի հետ պօստ-հեռադրան յարաբերութիւն ունի Զանգեզուր գաւառի կենտրոն Կորիսը։ Ամբողջ գաւառում, որ բռնում է 6,743 քառ. վերստ տարածութիւն, ուր կան 426 բնակավայրեր և 145,653 աղդաբնակութիւն,*)—այլևս ոչ մի կէտ չկայ, որ պօստ-հեռադրական հաղորդակցութեամբ միացած լինի ոչ միայն դրափ աշխարհի, այլև նոյնիսկ իր վարչական կենտրոն «Գերիւսի» հետ։

Կորիսում վերջանում են պօստն ու հեռագիրը, Եթէ ձեզ հարկաւոր է նամակ ուղարկել, դիցուք Հին-նախիւնեան, որ գտնւում է հարեւան գաւառում և Կորիսից շատ լինի հեռու 110 վերստ, —դուք պէտք է առաջուց։

*) Կավ. Կալ. 1904.

իմանաք, որ պոստը տանելու է ձեր նամակը նախ Շուշի, Եւլախս, Թիֆլիս, Ալեքսանդրոպոլ, Երևան և ապա միայն Նախիջևան։ Ուրեմն, 110 վերստ անցնելու փոխարէն ձեր նամակը պտտելու է մերձաւորապէս 800 վերստ և լաւ է եթէ տամներորդ օրը նա տեղ համնի։ Այն էլ պէտք է ի նկատի ունենաք որ պոստը շաբաթը միայն երկու անգամ է գնում գալիս Կորիս։ Ասենք մեր գաւառական քաղաքներից շատերի համար դա նորմալ երեսյթ է։

Տեղացիները գիտեն որ գեռ անցեալ դարի 60-ական թուականներին ծրագրուած է եղել՝ միացնել Նախիջևանը Կորիսի հետ պոստային ճանապարհով։ Նոյնիսկ շնուրել է ճանապարհի մի մասը Նախիջևանից մինչև Զանգեզուրի սահմանի մօտ դանուող Բիշանագը, որ ծառայում է Նախիջևանի շինովնիկների համար իբրև առմառանոց։ Սակայն Բիշանագից դէնը ճանապարհը մնում է մինչև օրս չինուած, թէև այդ մնացածը հազիւ 60 վերս տարածութիւն բռնիւ Աւելորդ է երկարաբանել թէ ի՞նչ կուլտուրական և տնտեսատկան օգուտներից է զրկում գաւառը հազորդակցական այդ աղքատութիւնից և թէ իսկական պրոդրեսուը այս կողմերում որքն հեռու է չակերտաւոր պրոդրեսսից... Համեմատաբար աւելի բախտաւոր են գաւառիս Պղնձահանկերը (Մադան), ուր գոյութիւն ունեն 8-ի չափ համերեր և ձուլարաններ, բանում են երկու հազարի չափ բանուորներ և միայն 1905 թ. 56,065 պուդ պղնձ է հալուել *). Հազորդակցութիւնների բացակայութիւնը ահագին մնաս է հասցնում և այդ արդիւնաբերութեան ինձ յայտնեցին որ արդէն պոստի ճանապարհ է շինուած Կորիսից մինչև Հանքերը, սակայն գեռ ևս չի սկսուել անիւային հազորդակցութիւնը, ուստի պոստը ուղարկում է բեռնաբարձ։ Այդ էլ մի բան է...»

*) Պուդը ծախւում է 11—12 բուբլի։

Գ.

Միւս օրը կէսօրին ճանապարհ ընկայ ծաթե այդ վանքի վանահայր և վիճակիս յաջորդ ներսէս վ. Մ.-Թանգեանի հետ, որ տասը տարի առաջ նուշուայ թեմ. դպր. ուսուցչական խմբի անդամներից էր:

Վանքից շաբաթը երկու անգամ յատուկ մարդ են ուղարկում պոստ ստանալու: Վանահայրը այս անգամ կարգադրել էր և ձիեր բերելու մասին:

Եղանակը՝ զով էր և պարզ: Մեր շաւիղը ընթառում էր նախ Կորիս գետի ափով ներքև, ապա չհասած Քարահունջ գիւղին մենք ծռեցինք արևմուտք և անտառապատ զառափայրով բարձրացանք մի ընդարձակ սարահարթ: Այնուհետեւ բոլոր ժամանակ մինչև Որոտնի ձորը հարաւարեւելեան ուղղութեամբ էինք առաջ գնում:

Այդ ընդարձակ լեռնադաշտի հիւսիսային մասի հեռու հորիզոնում երևում էր Իշխլու լեռնային խումբը իր ձիւնապատ գագաթներով: Իշխլուի ստորոտում, ասում են, գտնուում է մի լիճ (Ղարագեօլ), որի մատերքում է սկիզբն առնում Կորիս գետը: Զով և գալար Սիւնիքի Իշխլուն ամբողջ ամառ իր գագաթների վրայ պահպանում է ձիւնի ծածկոցը և ջուր է մատակարարում իր կուրծքի ծերպերից հոսող վտակներին:

Ճանապարհին ամենմի բայլափոխում դուք հանդիպում էք հրաբղխային զօրեղ գործունէութեան անջնջելի հետքեր. հողը, քարերը պատմում են ձեզ որ ժրաշան հայ գիւղացուքը տիւնքով, յաճախ նաև արիւնով, ողողուած դաշտերը նախապատմական ժամանակներում ականատես են եղել երկրի հրաբղխային ցնցումներինու ժայթ-գումներին:

Ճանապարհից աջ սարահարթի վրայ կոնուսների նման զատ-զատ կանգնած են երեք սարեր. այդ Ուշ-Թափաւարի ստորոտում 180 տարի մեղնից առաջ Դաւիթ-

բէդը իր քաջերով յարձակուեց հայերին նեղող Ղարա-
շոռլու շիա քիւրդ ցեղի վրայ և ոչնչացրեց նրան. այդ-
պէս սկսեց իր հոչակաւոր ապստամբական շարժումը
այդ նշանաւոր սիւնեցի գիւցազնը:

Մեր առջևից հեռու հօրիզոնում երևում էր մի
սրածայր գագաթ, որից աջ տարածում է պարսպա-
ձև լեռների մի շարք:

—Ի՞նչպէս են կոչում այդ լեռները, հարցրի ձի-
ուս յետևից ոտքով բայլող Խուդուց, վանքի ծառայից?
—Աղունասար, եղաւ պատասխանը:

Մեր շուրջը՝ հիանալի մշակուած արտեր, ճոխ աճած
հացաբոյսերով, որոնց լի հասկերը բարձրից ներքեւ էին
նայում Խուդու վրայ: Ասենք Խուդին էլ մի երևելի հա-
սակ չունէր, թէև նրա վտիտ մարմնի մէջ այնքան ոյժ
կար որ նա յետ չէր մնում վանքի կերն ու հանգիստը
առատորին վայելած մեր նժոյդներից:

Քարահունի հողերին կպած են Խոտ և Շնհեր
գիւղերի արտերը: Այդ գիւղերը պատկանում են վան-
քին: Այդպէս ուրեմն մենք մտանք Տաթևի ընդարձակ
կալուածքի սահմանները:

Այդ հնադարեան վանքը այժմ ունի 9 գիւղ, չհա-
շուած վէճի մէջ 4 գիւղ, ինչպէս և Մեղրիի և Կապա-
նի զանազան տեղերում եղած մանր մունք կտորները:
Անվիճելի կերպով վանքին պատկանում է 21,400 դե-
սեատին տարածութիւն, որ բերում էր տարեկան 3581
րուբլի եկամուտ: Վէճի մէջ եղած հողերի մեծ մասը
(մոտ 2¹/₂ հազար գեսեատին) դատաստանական պալա-
տում վճռուած է յօդուտ վանքի:

* * *

Հալիձոր գիւղի սահմաններում մտանք վանքի ան-
տառը և երկար ժամանակ մեր շաւիղը ոլոր-մոլոր պը-
տոյտներ էր անում կաղնի, թիւկի (ռժենъ), հացիկի
(յասենъ) և այլ տեսակ-տեսակ ծառերի միջով, որոնց

մէջ նկատելի էր տեղատեղ և արջածառ (քանին): Անտառային շաւդի վրայից կախվուուած ճիւղերը ստիպում էին ամեն մի քայլափոխում գլուխ կռացնել: Անտառից դուրս եկանք մի բաց տեղ: Մօտերքում գտնուում էր Հալիձոր գիւղը, որ չէր երևում մեր կանգնած տեղից ի դէպ, պէտք է նկատել որ այս Հալիձորը տարբեր է Դաւիթ-բէզի պատմութեան մէջ հոչակուած Հալիձորից, որ գտնում է հին Բաղաց աշխարհում կամ այժմեան Ղափանում, ուր դեռ ցոյց են տալիս ուղևորին քաջ սիւնեցու անտարիկ բերդի աւերակները:

Ինքը Որոտն գետը և նրա ձորի յատակը գեռ չէին երևում, այլ միայն դիմացի բարձր լեռնադաշտը, որի սեպաձև պատռուածքի եզրին գետեղուած էր երիցաթումբ գիւղը և նրա յետեւում հարթ կանաչ սարալանջը պարփակուած անտառախիտ լեռների կոհակներով:

Սուաջ ընթանալով մի այլ բաց տեղից տեսայ հեռաւում մի դալար բարձրավանդակի վրայ անդնդախոր քարափի գլխին բուն դրած ծաթեսի վանքը իր երկու սրածայր կաթուղիկէներով և ձեղունով:

Արդէն մօտ էր Որոտնի ձորը, մենք դուրս էինք գալիս Հաբսնդ գաւառոի սահմաններից և մտնում չին Սիւնեաց Ծղուկ գաւառը, որ բունում էր Որոտնի կամ Բաղարչայի վերին աւազանը:

* * *

Դէպի Որոտնի ձորը իջնում է մի կեռումեռ կածան. դրանից ձախ խորխորատ, իսկ աջ—վլուած ապառաժների ահուելի զանգուած. այդ սեպաձև կախուած ժայռերի գլխից կարելի է միքանի զինուած մարդկանցով ամրող վաշտերի առաջն կտրել. իզուր չէ այդ վտանգաւոր անցքը Սախկալ-թութան կոչում:

Անդնդախոր ձորի հանդէպ կանգնած է գետի միւս բարձրաբերձ ափը, թողնելով մի տեղ իր և ջրի արանքում փոքրիկ տափարակ, որի վրայ շինուած է Մեծ Ա-

նապատը։ Այդտեղ է Տաթևի գետակը թափւում
Որոտնը. երեսում են Մեծ Անապատը շրջապատող քա-
ռակուսի հաստ պարիսպները, որոնց չորս անկիւնում
միամի աշտարակ։ Այդ բերդ-անապատի կենտրոնում երե-
սում է եկեղեցու կտուրը փոքրիկ դմբէժով և զանդա-
կատնով, իսկ ներսում՝ պարսպին կից մի շարք խուցիկ-
ներ։ Թէ անապատի բակում և թէ շուրջը տնկուած են
ահագին թթենիներ։ Ինձ ասացին, որ մի այլ անա-
պատ էլ գտնուում է Հալիձորի դիմաց և կոչւում է Հա-
րանց Անապատ։ Իրար կողքի երկու անապատ! XVII-րդ
դարում, երբ շինուել են այդ անապատները, երեկի հա-
յերի մէջ ճգնելու տենչով բռնուած ահագին բազմու-
թիւններ կային, այժմ այդ ամայի եկեղեցիներում և
խուցերում բուն են դրել չղջիկներն ու բուերը, ուր
այլևս ոչոք չի խանդարում նրանց անդորրութիւնը։

Հասանք ձորի յատակը։

—Բայց ուր է Որոտնը, հարցը ես վանահօրից.—
մեր առջև գետին է մինչև միւս ափը։

—Իշնենք ձիուց, մենք Սատանի կամուրջն ենք հա-
սել. այդ գետինն է այն կամուրջը, որի տակից անցը-
նում է Որոտնը։

Խուդին անցկացրեց մեր ձիերը ձորի միւս կողմը,
որ ներկայացնում էր սպիտակ, զեղին և կարմիր ժայ-
ռերի հաստ շերտեր, փորուածքներով ու խորշերով։
Ստոլակտիտների զանազան ձևերի ու մեծութեան կախ-
կիսուած լեզուակներ, ապառաժների ճեղքերում բու-
սած վայրի խոտեր ու մացառներ ծածկում էին լեռան
վիթխարի կուրծքը, որ թաց էր նրա խորքերից ձո-
րող հանքային ջրերից։ Կամուրջի աջ՝ հիւսիսային՝ կող-
մից ձորի երկու կողքերը իրար մօտեցել են և կնճիռ-
ներ կիտած դաժան հայեացքով իրար են շափում, կար-
ծես պատրաստ են իրար վրայ վլուել. բայց նրանց
բաժանում է կատաղի Որոտնը, որ հիւսիսից դահավի-
ժելով երկու հսկաների մէջ, լի ցատումով գոռում է,
դոչում, կատաղութիւնից փրփրում և նրանց ոտների

տակ ական փորելով փախչում ստորերկրեայ ճանապարհով։ Նրա ալիքները յորձանք տալով դուրս են վիժում կամրջի ձախակողմից և լաց ու կոծով հեռու փախչում այդ վտանգաւոր վայրից։

Սքանչացած բնութեան այդ ահոելի, միաժամանակ խրոխտ ու հոյակապ տեսարանից, ես ափսոսում էի որ նկարիչ չեմ անմահացնելու համար Օրիներ և Դաւիթներ ծնող այդ ձորերից մէկի պատկերը։

Մեծ զգուշութիւններով մենք մագլցեցինք ժայռերի վրայ, որոնք վտանգաւոր էին իրանց խոտերի թանձը-րախիտ աճմունքով, և անցանք Սատանի կամուրջի այն կողմը, որտեղից մուտք է գործում Որոտնը։ Դա մի զարհուրելի վիճ էր իր երախի այլանդակ պատռուածքներով։ Վրփրադէզ Որոտնը գահավիժուում էր և կորչում խոլական խաւարով ծածկուած ստորերկրեայ կամարների տակ։ Վերևեից կախկխուել են ստոլակտիտեան բիզ-բիզ ատամներ, ծերպերից խոտեր ու մացառներ։ Նման տեսարան է և այդ բնական տունելիք հակառակ կողմից։

Կարծես կիկլոպների հուժկու բազուկներ են իրար վրայ գիղել այն վիթխարի ժայռերը, որոնցից կազմուած է այդ բնական կամուրջը։

* * *

Արեւ մայր մտնելու մօտ էր։ Մենք անցել էինք մօտ քսան և հինգ վերստ, առանց հանգստանալու։ Այժմ վերջին և ամենադիք վերելքն էր մեր առջև, վանքը հասնելու համար, որ Սատանի կամուրջից չի երևում և գտնում է մօտ երկու վերստ նրանից հարաւարեւուագք, հեռուից մեր տեսած բարձրաբերձ լեռնադաշտի եղբին։

Օձապտոյտ շաւիղը այնքան դիք էր տեղաեղ որ անսովոր մարդու թւում էր թէ անկարելի է ձիու մէջքից վար չգլորուել։ Մեր յոգնած նժոյգները հեւալով վեր էին մագլցում և շուտ-շուտ կանգ առնում շունչ առնեւ-

լու համար։ Զառիվայրը ծածկուած էր ծառերով և թշ-
փերով և փլած ապառաժների ահագին կտորներով։

Ահա վերջին պտոյտը և քրտինքի մէջ կորած ձիերը
հասան լեռնադաշտի գլուխը։ Մուելով հարաւ, լեռնա-
դաշտի դէպի ձորը նայող եղերքով, անցանք վանքի դեռ
չնձած արտերի կողքով և գուրս եկանք հնադարեան սըր-
բավայրի հսկայ պարսպների տակ։

Մթնել էր արդէն, կիսախաւարի մէջ լուռ կանգ-
նած պարիսպներն ու բուրգերը, կամարակապ դարպասի
գլմին կանգնած մատուռ-զիտանոցը և պատերի այն
կողմ երկինք բարձրացած երկու սրածայր գմբէթները
ինչոր խօրհրդաւոր վեհութիւն էին ներշնչում։ Մարդ-
տիրութիւն ու սարսուռ էր զգում, յիշելով նրանց ալեոր
գլուխներով հազար տարիների ընթացքում անցած քա-
ղաքական արհաւիրքներն ու փոթորիկները, նրանց տե-
սած հալածանքները, կոտորածներն ու հրդեհմունքները։

Կամարակապ երկար անցքով դուրս եկանք վանքի
բակը, ուր սպասում էին վանահօր՝ երկու վարդապետ-
ներ, հոգեոր վարչութեան քարտուղարը և միքանի ծա-
ռաներ։

Վանահօր կարդագրութեամբ ինձ յատկացրին վան-
քի հիւսիսարևելեան մասում պ, Ա. Մ.—Ազարեանի հա-
շուով շինած հիւրասենեակներից մէկը։ Դուրսը ցուրտ
էր և մութ, ինքո վաստակած։ Այդքան սար ու ձորե-
րի յետեռում, պատմական մի այդպիսի վայրում շատ
հաճելի էր գտնել մաքուր, լաւ կահաւորուած ու լու-
սաւորուած օթեան։

Դ.

Պայծառ ու զով առաւօտ էր, երբ ես կանգնած
սենեակիս առջև պատշդամբի վրայ, զմայլում էի Սիւ-
նեաց աշխարհի մի հրաշալի լանդշաֆտով։

Նիմաց՝ կանաչ լեռնադաշտ, որի մէջտեղում խըր-
ճիթների մի կոյտ—ծանձատափ գիւղը. հորիզոնում

Գաղրոյլ լեռնագօտին, որի գագաթների վրայ տեղւտեղ
ձիւնի շերտեր են երեսում։ Զախ թևի վրայ՝ Որոտնի,
Ճորը իրար թիկունք մտած բարձր կողերով, աւելի հե-
ռու՝ լեռնագաշտեր, ճորեր և հորիզոնում արևի շողերի
մէջ նշմարուող Դիզափայտի կոհակները, մի հեռաստան, որ
բաժանուծ է իմ կանդնած տեղից մօտ եօթանասուն վերստ
տարածութեամբ։ Աւելի ևս չքնաղ է տեսարանը երբ
Դիզափայտի լեռների յետեւից ծագում է վարդաճաճանչ
արշալոյսը։

Աջ թևի վրայ հեռաւոր տեսարանները ծածկում
է կիսակործան պարիսպների յետեւում կանդնած ծաթեկ
տաճարը իր դէպի արևելք նայող բաց ճակատով։

Ենութիւնը, որի երկար պատշգամբի վրայ ես կանգ-
նած եմ, բաղկացած է հին խուցերի կտուրների վրայ շին-
ուած մի շարք սենեակներից։ Հին խուցերի և նոր սենեակ-
ների յարկերը այդ ձեւ շաղկապուած յենուած են իրանց
մէջըով վանքի պարմապին։ Այդ շինութեան առջև գտնուում
է ծառերով ու ածուներով բռնուած մի փոքրիկ տափա-
րակ, որի եղերքը իջնում է դէպի անդնդախոր ճորը։
Իջնենք պատշգամբից, անցնենք վերև յիշած կիսա-
կործան պարսպի միւս կողմը—վանքի բակը։

Վանքի բռնած տափարակը արևելքից, հարաւից և
արևմուտքից դէպի խոր անդունդներն է իջնում։ Այդ բնա-
կան պարիսպները անառիկ են դարձրել բերդ-մենաստա-
նը երեք կողմից։ մնում է բաց այդ դուրս ցցուած տու-
փարակի այն մասը, որ լեռնագաշտի շարունակութիւնն է
կազմում։ այդ կողմից էլ բարձրանում են վանքի արուես-
տական հաստահիմ պարիսպները իրանց գոռող բուլ չերով։

Այդ թերակղզիածեւ տափարակի վրայ, աւելի մօտ
նրա արևելեան եղել վանքի կանգնած է վանքի տաճարը։
Բերդ-վանքի բռնած տարածութիւնը յաւ տնտեսությունը
պատակով նրա բոլոր շինութիւններին այցի եկեղեցուց,
կամ կից են տուած պարիսպներին և նեց դրսի պա-
տերով ուղղակի անդնդի եղերքից են բարձրանում։
Այդպէս, վանքի կամարակապ մուտքի դիմաց՝ պարսպին

կպած է ախոռատունը, նրան կպած է արևմուտքից ընթերցարանը և մի շարք թաղածածկ խուցեր ու սենեակներ, որոնք բոլորակի գնում են հարաւ, ուր գտնըւ տում է սեղանատունը, առաջնորդարանը, և արևելեան պարսպի հետ միանալով գալիս համնում են մեր տեսած կիսակործան պատերին, որի անկիւնում այժմ էլ ցոյց են տալիս սենեակ այն ստորերկվեայ անցըով, որով պաշարուածները իջնում են եղել Որոտնի ձորը՝ ջուր վերցընելու համար:

Տաճարի երեք կողմից մնում է բաւական մեծ հրապարակ, որ, օգտուելով վանքի աղբիւրից, այժմ փորձում են բուրաստան դարձնել:

Տաթեսի տաճարը, ինչպէս յայտնի է պատմութիւնից, շինուած է IX-րդ դարում, այնուհետև թէ բնութեան և թէ իրար հետևող մի շարք թշնամիների առաջացրած աւերտումները նորից շինուել են, ամենավերջին նորոգութիւնը այն վիթխարի զանդակատունն է, որ կառուցուել է տասը տարի առաջ, պահպանելով հնի ճարտարապետական ոճը:

Դեռ IV-րդ դարում Տաթեսի տեղում մի անշուք եկեղեցի է եղել շինուած, և մինչև որ Սիւնեաց աշխարհի եպիսկոպոսական աթոռը գտնուում էր Որոտնի վերին հոսանքում, նրա աջ ափին, Անդեղակոթի գիմաց, հոչակաւոր Նաղատ գիւղաքաղաքում, որ մի ժամանակ Սրբնեաց իշխանների ոստանն էր, — չէր մտածում Տաթեսի բնական ամրութիւններից օգտուելու մասին, արաբական արշաւանքները ստիպեցին ուշք դարձնել Տաթես վրայ. 839 թուականին Դաւիթ եպիսկոպոսը գնեց Սիւնեաց իշխան Փիլիպպէից այդ տեղը, ապա բարեպաշտ այ իշխանների և սիթ նների նուիրած կարարեպաշտ ու ուշնձերով հարստացած սրբավայրում 895—906 թուակ պատ, կանգնեցին Պօղոս-Պետրոսի տաճարը: Հարաւի վի կողմից նրա հետ ձուլուել է մի փոքրիկ եկեղեցի ևս, որ երկու անդամ հիմովին կործանուել է, իսկ յետոյ երրորդ անդամ շինուել է Սիւնեաց աշխարհը

մոռացութիւնից փրկող Ստեփաննոս Օրբելեանի ձեռքով։ Այդ նշանաւոր պատմիջը ապրում էր XIII-րդ դարում։ Հետևեալ խօսքերով է անմահացրած նրա յիշատակը այդ ս. Լուսաւորիչ եկեղեցու դրան վրայ. ԶՏէր Ստեփաննոս Մետրապոլիտ Սիւնեաց որ է Պրօտօֆոռանտէս Հայոց Մեծաց, որդի Մեծափառ իշխանին Տարսայիծի եւ շինող սուրբ Եկեղեցւոյս, յիշեցէք ի Քրիստոս։

Այդ եկեղեցու շարունակութիւնն է մի կամարասրակապ սիւնազարդ սրահ, որի տակ հանգչում է մի այլ նշանաւոր գրող և եկեղեցական գործիչ. նրա դամբարանի վրայ կարդում ենք հետևեալ տողերը։

Ծնորհիւն Այ շինեցաւ սք. մատուու եօթնալոյս ռաբունապետին եւ երկրորդ Ուկեքերանին երիցս երանեալ վարժապետին մերոյ եւ շորրորդ Լուսաւորչին սրբոյն Գրիգորի Տաթեւացոյն ևայլն։

Այդ այն Տաթեւացին է, որ խօսքով, գրչով և գործով մաքառում էր ·XIV դարում ազգային եկեղեցու թշնամի Ֆրանկիսկեան և Դոմինիկեան կրօնաւորների դէմ և այդպիսով ընդգիմադրութիւն էր ցոյց տալիս ունիթուական պրոպագանդային Հայաստանում։

Գրիգոր Տաթեւացին ահագին ժողովրդականութիւն ունի մանաւանդ Այնիքում, ուստի զարմանալի չեն անկեղծ միամտութեամբ ձօնած չափազանցութիւնները այդարձանադրութեան մէջ։

Բակի հարաւային մասում կանգնած է մի ութանկիւնանի օբելիսկ—դա վանքի հռչակաւոր սիւնգաւազանն է, դագաթը պսակուած քարի մէջ քանդակուած խաչով։ Առաջնորդարանին կից եղել է մի պատշգամբ, որից ձեռքով կարելի էր հրել սիւնը և նա կ'երերար իր տեղում, այժմ այդ պատշգամբը չկայ. իսկ սիւնը շրջապատուած է վանդակով և անշարժ կանգնած է։ Այդ դրութիւնը երեմի աւելի սազական են համարել վանական կեանքին...

Մտայ առաջնորդարանը կամ «թանաբան», — գեղեցիկ կահաւորուած կամարակտուած սենեակներ, դուրս եկայ

պատշգամբը, որ կախուած է ուղղակի անդնդի վրայ և նայում է դէպի արեելք։ Գլուխ պտտեցնող բարձրութիւնից երեսում են ներքեսում՝ քարափի շարունակութիւն կազմող պատերը, նրանց տակ գտնուող սեպածեապառաժները, աւելի ներքեսում սարի լանջից պոկուած մեծուփոքր քարերի խառնիխուուն կարկառ, ապա կանաչ զառիվայրներ և տափարակ մինչև Որոտնի փրփրագեղ հոսանքը։ Պատշգամբից երեսում է Որոտնի ձորը, Սատանի կամուրջը, Սախկալթութանը և մեր եկած ճանապարհը։

Առաջնորդարանից դուրս գալով անցանք բակը և մտանք վարդապետներից մէկի բնակարանը, որ բաղկացած էր երկու փոքր սենեակներից. այդ կողմից ևս պատշգամբ կար կախուած Տաթեսի ձորը իջնող բարափի դլխին։

Ինձ հետաքրքրում էին վաճքի պարիսպները և բուրգերը իրեւ հին ըմբուշները Բակից այդ պարսպի միայն վերսեի մասն էր երեսուն։ Անցայ կամարակապ մուտքով, որի գլխին, ինչպէս սկզբում տեսանք, կանդնած է մատուռ-դիստանոցը։ Սրբատաշ քարերից կոփուած այդ փոքրիկ եկեղեցին շինուել է ՏԻ գարսում և իրեւ հնութիւն յամենայն դէպս արժանի չէր հաւանոց դառնալու... իհարկէ մեր մերկանտիլ գարում ձուն և հաւի միաը աւելի են գնահատուում քան օրբութիւններն ու հնութիւնները, սակայն վաերքում այլ վերաբերմունք կարելի էր պահանջելու..

Կամարակապ անցքը վերջանում է և ձեր առաջ բացուած է ընկուղի տախտակից կուած-կոփած հաստուպինդ գուռը, որ իր վրայ կրում է անժիւ թշնամիների կատաղի հարուածների հետքեր, փոսեր. գուան կողերից կանգնած են միամի քար և դրանց վերևից գրած է երրորդը. միապաղաղ տաշած Յ քարեր, որոնք յիշեցնում են նախապատմական Յունաստանի մելինեան դռները, նոյնպէս Յ միապաղաղ քարերից. այդ կիկլոպեան քարերից վերինը արդէն ճաքել է։ Դուան առաջ երկու հաստահիմն սիւ-

Հերի վրայ յենուած է կամարը, որի տակ կանգնու-
ղն կարող են տեսնել կամարի վերևից բացուող դռնա-
կից, որ ծածկում է քար սալով։ Դարպասից աջ ու
ձախ հաստ պարիսպներն են, որոնք պաշտպանում են
վանքի միակ անպաշտպան մասը — լեռնադաշտի կողմից։
Ձախ պարիսպը, — որի յետևից խուցերի կտրին շինուած
մեղ ծանօթ նոր շինութիւնն է և բանջարանոցը, —
շարունակում է մինչև անդունդի եզերքը, իսկ աջ պա-
րիսպը անկիւն է կազմում և ծուռում արևմուտք ու հաս-
նում ծաթե գետակի փորած խոր ձորի եզրը և շարու-
նակում՝ սեպածե քարափի գլխով։ Պարսպի անկիւննե-
րում կանգնած են մի ժամանակ գոռող բուրգերը երկ-
շարք ծակերով։ Այդ գլանածե բուրգերի գրսի մակե-
րեսոյթի վրայ աչքի են ընկնում գետանից բարձր, մի շար-
քի վրայ, երեք վիթխարի կտուցածե ցցուածքներ սալա-
չե քարերից, իւրաքանչիւրը ներքեսից բուրգի ներսը
տանող անցքով։ Այդ կտուցների պաշտպանողական դե-
րը չկարողացայ ինձ բացատրել։

* * *

Իր ժամանակ Տաթել հոչակուած էր իբրև զօրեղ
ամբութիւն, այդ պատճառով հեռու դաւառներից անդամ
ժագավուրդը յաճախ ապատան է, գտել նրա հաս-
տավինդ պարսպների յետևից։ Հեռաւոր Գողթան գա-
ւառից անդամ փախչում էին Տաթելի վանքը։

Այն, ինչ անկարող է եզել կատարել հայերիս բաժան-
քածան եղած, պառակտուած ու թոյլ աշխարհական իշ-
խանութիւնը, փորձել է իրագործել վանքը, ուստի և քա-
ղաքական միացնող իդէալներից զուրկ ժողովուրդը իր
ամբողջ յոյսը դրել էր հոգեսորականութեան ու եկեղեցու
վրայ։ Եւ իշխանները, բարեպաշտ հայ տիկիններն ու ժո-
ղովուրդը իրանց հոգու փրկութեան համար նուէրներ էր
ոք բերում էին վանքերին։ Տաթել մի ժամանակ ունե-
ցել է մօտ 25 սեփական գիւղեր։ Տաթելի թե-

մում Ստեփաննոս Օբբէլեանից առաջ 1400 հայ գիւղէր հաշւում, իսկ այդ պատմիչի ժամանակ 720։ Այժմ Տաթևի յաջորդութեան մէջ 90 գիւղ է մնացել 63 հազար ժողովուրդով։ 1903 թուականի ընթացքում, հ. յաջորդի մատեանների համեմատ, ծնուել են 1408 ար., 1204 իդ. սեռից, կատարուել է 683 պսակ, տեղի են ունեցել 502 ար. և 487 իդ. մահեր, ուրեմն 4284 դէպք, որոնցից գրամական շահ ունի հոգեսրականութիւնը։

Մի ժամանակ վանքում ապրում են եղել 500 կրօնաւորներ. մենք տեսանք Մեծ Անապատը, յիշեցինք, որ նրա կողքին եղել է և Հարանց Անապատը։ Երեակայեցէք թէ այդքան բերաններին լիութիւն տալու համար ի՞նչ միջոցներ էին հարկաւոր։ Այժմ Անապատները ամայի, իսկ վանքում բացի վանահայր-յաջորդից երկու վարդապետներ, այն էլ մերձաւոր Տաթև գիւղից։

Այդ գիւղը հազիւ երկու վերստ հեռու լինի վանքից և գտնուում է նրանից հիւսիս-արևմուտք Պետրոսսախաչ սարի ստորոտում։ 1897 թուականի ժողովրդագրութեամբ այդ գիւղում եղել է 1881 շունչ։ Վանքապատկան այդ գիւղում կայ սկզբնական մի ուսումնարան, որի ուսուցիչը յոյն է։

Չնայած որ վանքի ընթերցարանը բաց է բոլորի համար—գիւղացիները չեն օգտուում նրանից։ Եւ ինչու զարմանալ հասարակ տղէտ գիւղացիների վրայ, երբ ընթերցանութիւնը պահանջ չէ նոյնիսկ վանքի երկու վարդապետների համար, որոնց միակ գործն է—օրը երկու անգամ եկեղեցում մենամենակ կանգնած ժամ ասել։ Դրանց անընթերցասիրութիւնն էլ զարմանալի չէ։ այդ ծերունիներից մէկը պարզամտութեամբ հաւատացած էր որ ճապոնացիները «հայ-քրիստոնեաներ» են...

Լ. Ս.

(Վերջը յաջորդ համարում)